

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՊՐԱՆՈՍՏԻԱԻ ԵԿԵՂԵՑԻ ՌՈՒՍԵՅ

Պրաւօսլաւ դաւանութիւնից կաթողիկոսութեան անցնելը, որը տեղի ունեցաւ Արեւմտեան Նահանգներում և այն էլ ահա-դին խմբերով, պահպանողական աշխարհական և կրօնական մամուլին առիթ տուաւ խիստ կերպով յարձակուելու համբերատարութեան նոր օրէնքի վրայ: Պատասխանելով այդ յարձակումներին Անդրէաս վարդապետը գրում է Ս. Պետերբուրգոյի վեդօմօստի № 199 ում. — Ըռնութիւնը միշտ չեզոքացնում և թուլացնում է ամենից առաջ նրանց, որոնք նրա օգնութեան են դիմում: Այդ նոյն օրէնքը կրկնուեց և մեր կեանքում: Բայց այստեղ եկեղեցին չէ մեղաւորը, նա ինքն էլ միայն տանջւում էր և այժմ էլ տանջւում է հովանաւորող ոստիկանական միջոցներից, այն բեժիմից, որը տանում է դէպի ընդհանուր դժգոհութիւն: Բանից դուրս է դալիս, որ ամեն տեղ մեզանից լաւ է, որ ինչ որ ծախապաշտներն աղանգը առաւել ուժեղ և լաւ է կաղմակերպուած, քան ժամանակակից պրաւօսլաւ հասարակութիւնը: Բայց մեր յետադէմները, որ գլխովին մեղաւոր են պրաւօսլաւիայի այդ սոսկալի կացութեան խնդրում, շատ քիչ են վրդովւում. նրանց վճիռը պատրաստ է և դիւրին. — պէտք է աշխատել, որ ամենքի մօտ նոյնքան վատ լինի գրութիւնը, որքան մեզ մօտ է: Նրանք իրենց զգուելի սխալոցը համարում են պրաւօսլաւիայի պաշտպանութիւն և յօգուտ եկեղեցու հոգատարութիւն:

Վարդապետը դտնում է, որ պրաւօսլաւ եկեղեցուց խմբերով հեռանալը ոչ թէ նոր օրէնքի արդիւնք էր, այլ հետեւանք նրա նախընթաց՝ հովանաւորող բեժիմի որը քայքայեց եկեղեցու ներքին ոյժը: Հովանաւորող քաղաքականութիւնը վնասակար եղաւ և միւս կողմից օտարազգիներից ռուսացնելու գործում օգտուելով նաև պրաւօսլաւ հաւատով, նա սովորեցրեց նրանց նայել եկեղեցու վրայ որպէս զգուելի բերօկրատիայի մի գործիքի վրայ. և այն ֆանատիկոսութիւնը, որով այժմս կաթողիկոսները կռւում են պրաւօսլաւ հաւատոյ դէմ, ուղղուած է ոչ այնքան եկեղեցու, որքան հին եկեղեցական ուղղութեան դէմ:

Церк. Вѣстникъ-ում կարդում ենք.

Սամարայի թեմական թերթը վանականներին ջերմ կոչ է անում «Ժողովրդին ծառայելու», ինչպէս էլ նայելու լինինք վանականութեան խնդիրներին վրայ, նա չի կարող չեղոր մնալ ներկայ ընկերվարական—քաղաքական այն կրիզիսի ժամանակ, որի մէջ ընկել է մեր հայրենիքը: Նա պէտք է համարձակութիւն հեղինակութիւն ունենայ հանդէս դալու ընդհանուր աւերածութեան ժամանակ և խաղաղութեան ձայն տալ նրանց, որոնք թշնամութիւն են տածում. նա սիրող բազմակներով պէտք է հարթի մարդկային յարաբերութեանց անհարթութիւնները և զարգացնի մարդկանց մէջ ազնիւ զգացմունքներ: Տարաբաղդաբար մեր ժամանակակից կեանքում այդ ընդհանուր խաղաղաբար հեղինակութիւն չենք տեսնում: Զիայ անձնուրաց մէկը, որ դար ռուսական թէքայից և հաշտեցնեք թշնամանողներին վանականները և առհասարակ եկեղեցու ընդ որ պաշտօնեաները, որպէս զի կարողանան հեղինակաւոր ձայնով դուրս գալ ընկերվարական—քաղաքական պայքարի ժամանակ, պէտք է իրենք այդ կռուից բարձր կանգնած լինին և ոչ թէ նրանում միջամտեն և անցնեն կռուողներից որ և է կողմը: Տարաբաղդաբար այդ հայեցակէտին չեն հետևում մեր վանականներից շատերը: Սրինակ հէնց «Զայնը» սուրբ Սարգսի մենաստանից, որը տպուեց օգոստոսի 6-ին հրովարտակի առթիւ «Троицкій Листокъ և Моск. Вѣдомости» թերթում, հանդէս է գալիս որպէս որոշ քաղաքական ուղղութեան կողմնակից: Այս դէպքում բնական է, որ «Զայնը» ոչ թէ խաղաղասիրութեամբ համակուած չէ, այլ ընդհակառակն լի է թշնամութեամբ և այդ՝ ոչ թէ օտաբաղաւանների դէմ: Որպէս քաղաքացի իւրաքանչիւր մարդ իրաւունք ունի արտայայտելու իւր քաղաքական հայեացքները, բայց յիշեալ «Զայնը» հանդէս է գալիս վանքի կողմից կենարար ս. նրբորդութեան և ս. Սարգսի տնից: Այնպիսի դէպքերից յետոյ խաղաղութեան մասին կարելի է խօսել և ոչ հեղինակութեան:

—Այն հեղինակաւոր խաղաղասէր ձայնէ՛ր. ռբբան կարելի ունենք մենք էլ այդպիսի ձայները. բայց նրանք ռբբ են ինչո՞ւ չեն երևում հրապարակի վրայ: Որովհետեւ միջին ոյժերը նրանց էլ են զինաթափ արել ու յետ զրկել:

Վրաստանի նոր էկզարխ նիկողայոս արքեպիսկոպոսի մասին Տիբերի թեմական տեղեկաբերի մէջ գրուած է հետևեալը.—

շրջանում նրանք մտնում են կոչման հակառակ նախանձ և վառասիրութիւն:

Եթէ դեռ շքանշանները որեւէ բանի պէտք են, թող նրանք մ'նան աշխարհական պաշտօնեաների շրջանում, իսկ Աստուծոյ եկեղեցին, որ իրաւունք չունի աչքաթող անելու քրիստոնէական իդէալները թող աղաթ մ'նայ նրանցից, ինչպէս և այն բոլորից ինչ որ արգելք է հանդիսանում քրիստոնէական կատարելութեան:

«СЫНЪ ОТЕЧЕСТВА» թերթի խօսքով Պետերբուրգի, Յարսկօէ Սելոյի, Պետերգոֆի և Եամբուրգի գաւառներում ժողովուրդը մեծ թուով թողնում է պրաւօսլաւ եկեղեցին և անցնում բողոքականութեան:

Թիֆլիզի օրիորդաց ինստիտուտի կրօնուսոյց աւագ քահանայ Կոնչևաշվիլին նշանակում է Ալլալերդի եպիսկոպոս, որին և տրւում է Բաբուի և Ալէքսանդրապօլի նորահաստատ թեմի եպիսկոպոսութիւնը:

Պօլսոյ տիեզերական պատրիարք Յովակիմը բաց նամակով աղերսում է Երուսաղէմի պատրիարքին չըմբռնել սուրբ գերեզմանի Աթոռի այն կալուածները, որոնք գտնւում են Բուկորփինայում, մանաւանդ օտարադաւան անձանց: Բովակիմն աւելացնում է, որ միեւնոյն է, այդպիսի վաճառումը չի թեթեւցնիլ այդ աթոռի նիւթական ծանր կացութիւնը:

Արարատի անցեալ համարներից յայտնի է, որ Կովկասում մտադրութիւն կայ վրաց եկեղեցու բարեփոխութեան. այդ նպատակաւ այժմս արդէն ս. Էկզարխի կարգադրութեամբ կազմուած է չորս մասնաժողով, որոնցից առաջինը պէտք է քննի ծխական վերականգնութեան խնդիրը, երկրորդը պէտք է զբաղուի եկեղեցական ծխական գաղթների բարեփոխութեամբ, երրորդը պէտք է քննի Թիֆլիզի հագեոր սեմինարի ծրարի բարեփոխութեան խնդիրը, իսկ չորրորդը պէտք է զբաղուի Սինօգալնի կանաթօրի և Էքզարքոսութեան գլխաւոր կառավարութեան բարեփոխման խնդրով:

Լինելով բոլորովին մատչելի, նա պարզ և մեղմ է բոլորի հետ. թշնամի չոր և ամեն կենդանի գործ մեռցնող ձևականութեան և ստույգեան, նորին քարձր սրբազնութիւնն Նիկողայոս արքեպիսկոպոսը կենդանի շունչ էր մտցնում եկեղեցական գործերի կառավարութեան մէջ: Խիստ անաչառ ուշադրութեամբ վերաբերուող դէպի ամենքը, ամեն տեսակ գործն ու կարիքը նա նոյնպիսի ուշադիր վերաբերմունք էր պահանջում գէպի գործը նաև բոլոր ծառայողներից և ոչ թէ ձևականութիւն: Նրբէք չըմբերժելով պատարագել վանքերում և ծխական եկեղեցիներում, նա ոչ մի ժամանակ նուէր կամ ժամոց չէր ընդունում: «Նս վանական եմ, ասում էր նա, ինձ գրամ պէտք չէ»:

Տվերում պաշտօնավարութեան ամբողջ ընթացքում սրբազանը՝ ինչպէս ասում են՝ երբէք լքիւ չի օգտուել իւր համեստ ռոճիկիցն անգամ և կիսից աւելին միշտ գանձարան է վերադարձրել պատերազմի կարիքների համար: Զի կարելի չըլի չէլ նաև սրբազանի վարած վերին աստիճանի պարզ կեանքի և կենցաղավարութեան մասին:

— Եթէ այս բոլորի հետ նորին քարձր սրբազնութիւնը վրաստանում եկեղեցու գոյութեան և գործունէութեան շրջանակից վանի քաղաքական միաումները և հաւատակիցների լեզուի հալածանքը դպրոցներից և եկեղեցուց, պէտք է յուսալ որ կատարելապէս կըխաղացնի ուստիկան սրբազանների հակաաւետարանական գործունէութեան շնորհիւ վրդովուած մտքերը:

Եւրասլաւի թեմական թերթում ջերմ բողոք է տպուած հոգեւորականներին պարզեատրելու դէմ: Հոգեւորականներին պարզեատրելը հիմք չունի ոչ Աւետարանի և ոչ էլ յունական հին եկեղեցու պատմութեան մէջ: Նրանք սկսուել են Պետրոս Մեծի ժամանակ, որը հոգեւորականութեան վրայ նայում էր որպէս ծառայողների առածին դասակարգի վրայ որոնք կազմում էին «հոգեւոր կամանդա»: Պարզեատրութեան գործը վերջնական ձևակերպութիւն ստացաւ Պաւել I կայսեր ժամանակ, որը հոգեւորականութեան կողմից առանց բողոքի չ'անցաւ: Մետրապօլիտ Պլատոնը՝ պարզեատրուած առաջին հովիւը թագաւորից թոյլտուութիւն խնդրեց, որ ինքը գոնէ «որպէս պրաւօսլաւ արքեպիսկոպոս մեռնի և ոչ թէ որպէս կաւալեր», բայց ստիպուած եղաւ զիջանել: Որպէս խրախուսանքի միջոց՝ միանգամայն կասեցնելի արժէք ներկայացնելով, շքանշանները մանաւանդ անտեղի են հոգեւորականների համար, որովհետև այդ

շրջանում նրանք մտցնում են հոշման հակառակ նախանձ և փառասիրութիւն:

Եթէ գեռ շքանշանները որեւէ բանի պէտք են, թող նրանք մ'նան աշխարհական պաշտօնեաների շրջանում, իսկ Աստուծոյ եկեղեցին, որ իրաւունք չունի աչքաթող անելու քրիստոնէական իդէալները թող աղատ մ'նայ նրանցից, ինչպէս և այն բոլորից ինչ որ արգելք է հանդիսանում քրիստոնէական կատարելութեան:

«Сынъ Отечества» թերթի խօսքով Պետերբուրգի, Յարկօէ Սելօյի, Պետերգոֆի և Նամբուրգի դաւառներում ժողովուրդը մեծ թուով թողնում է պրաւօսլաւ եկեղեցին և անցնում բողոքականութեան:

Թիֆլիզի օրիորդաց ինստիտուտի կրօնուսոյց աւագ քահանայ Կոնչևաշվիլին նշանակում է Ալլալերդի եպիսկոպոս, որին և տրւում է Բաբուի և Ալէքսանդրապօլի նորահաստատ թեմի եպիսկոպոսութիւնը:

Պօլսոյ տիեզերական պատրիարք Յովակիմը բաց նամակով աղերսում է Երուսաղէմի պատրիարքին չըվաճառել սուրբ գերեզմանի Աթոռի այն կալուածները, որոնք գտնւում են Բուկոփինայում, մանաւանդ օտարադաւան անձանց: Ի՞նչ Յովակիմն աւելացնում է, որ միևնոյն է, այդպիսի վաճառումը չի թեթեւացնել այդ աթոռի նիւթական ծանր կացութիւնը:

Արարատի անցեալ համարներից յայանի է, որ Կովկասում մտադրութիւն կայ լրաց եկեղեցու բարեփոխութեան. այդ նպատակաւ այժմս արդէն ս. էկզարխի կարգադրութեամբ կազմուած է չորս մասնաժողով, որոնցից առաջինը պէտք է քննի ծխական վերակազմութեան խնդիրը, երկրորդը պէտք է զբաղուի եկեղեցական ծխական դպրոցների բարեփոխութեամբ, երրորդը պէտք է քննի Թիֆլիզի հագևոր սեմինարի ծրագրի բարեփոխութեան խնդիրը, իսկ չորրորդը պէտք է զբաղուի Աինօգալնի կանտօրի և էքզարքրոսութեան գլխաւոր կառավարութեան բարեփոխման խնդրով:

Վրաստանում գոյութիւն ունեցող զիւղական շարժումները պատճառով քահանաների եկամուտներն այս տարի զգալի կերպով պակասել են: Քահանաներից շատ շատերը հարկադրուած են եղել ուրիշ աշխատանք որոնելու: Ծաղիկների գիւղի քահանան սկսել է օրավարձով աշխատել երկաթուղու գծի վրայ: Երբ քահանան ուղղում այդ նպատակաւ դիմել է ճահապարհի վարպետին, նա չի ընդունել ասելով՝ որ քահանայութիւն և օրավարձով մշակութիւն անհնարին է, բայց երբ քահանան դիմել է գծի գլխաւոր կառավարչին, վերջինս համաձայնութիւն է տուել և այժմ քահանան աշխատում է երկաթուղու գծի ուրիշ մշակների հետ և ստանում օրական 80 կո:

«Гражданинъ» թերի կարծիքով եկեղեցական հեղինակութեան անկումը կապ ունի քահանայական դասի անկման հետ, որը հետևանք է թեմական կառավարութեան պակասութիւնների: Իշխան Մեչչերսկին գրում է. ես նահանգական քաղաքի մի քահանայից նամակ ստացայ, որից առաջ եմ բերում հետևեալ տողերը.

«Սրբազանը բոլոր քահանաներին ընդունում է նախատեսեալում, որտեղ կախուած են վերնազգեստներ և շարուած կրկնակօշիկներ. ընդունում է բոլորին միասին ժողովրդի ներկայութեամբ և եթէ մինը շփոթուեց և չըկարողացաւ կանոնաւոր արտայայտել իւր ասելիքը, այդպիսի քահանային սկսում է ծաղրի առարկայ դարձնել. այնպէս որ ծաղրական տեսարանները սիրահարները ընդունելութեան ժամերին հաւաքւում են յատկապէս ղուարճանալու՝ թէ ինչպէս սրբազանը կը ծաղրի իւր քահանաներին: Վերև առաջ բերած տողերը մեր հոգեւորականութեան տխուր կեանքից մի բացառիկ պատկեր չեն հաղորդում: Զարմանալի չէ և այն, որ գրողը քահանայ է: Բայց զարմանալին այն ինչն է. քանի տասնեակ տարիներ անցան Ռուսաստանի յառաջադիմութեան շրջանից, այն ինչ սրբազանի և կոնսիստորիայի քարտուղարի վարուեցողութեան մէջ քահանայից հետ ոչինչ չի փոխուել. նոյն անարդանք դէպի անձնաւորութիւն, նոյն մոռացութիւն, որ քահանայի և եպիսկոպոսի վրայ ձեռնադրութեամբ նոյն շնորհքն է իջած: Նախասենեակում քահանաներին ընդունող եպիսկոպոսի համար միևնոյն է, թէ այդ քահանան ո՞վ է. արգեօք այնպիսի մէկն է, որ վերաւորական ընդունելութիւնից յետոյ կը հեռանայ արցունքներով և հառաչանքով՝ ազատութիւն երազելով, թէ այնպիսի մէկը,

որը դուրս դալով կասի: «Եթէ դու ինձ վրայ թքում ես, այդ դէպքում» ես թքում եմ քեզ և ամեն բանի վրայ էլ: Այո՛, այդ ձևով ընդունող եպիսկոպոսի համար նոյն է՝ քահանան իւր ամբողջ կեանքը հօտին ու Աստուծուն է նուիրում, թէ իւր ստամոքսին: Բայց ո՞ր ժամանակն է աւելի կարելի ունեցել բարձր կանգնած հոգևորականութեան քան մեր օրերը: Եթէ ինձ հարցնեն, թէ ինչո՞ւ է պահպանւում խղճուկ Ռուսաստանը, ես համոզմամբ կը կրկնեմ ինչ որ միշտ ասել եմ. «միայն այն խեղճ, ստորացրած և անպատուած զիւղական քահանաներով, որոնց սրբազանը ընդունում է նախասենեակում: Իսկ այդպիսի եպիսկոպոսն իւր վատ վարմունքով դէպի քահանաները, նպաստում է խռովութեան սաստկանալուն և եկեղեցու քայքայման:

ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏԻԺԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

Ինձ անծանօթ մէկը՝ «РҮСЬ» թերթի միջոցով դիմում է ինձ խնդրելով բացատրել, թէ ի՞նչպէս է նայում ուղղափառ եկեղեցին մահուան պատժի վրայ:

Գոհութեամբ կատարում եմ նրա խնդրքը: Ակզբից դիտողութիւն եմ անում. ես չգիտեմ այդպիսի մի որոշումն, որով մեր եկեղեցին ուղղակի և բացորոշ արտայայտած լինի մահուան պատժի նկատմամբ իւր հայեացքը: Նա չէր կարող ասել սուտը, իսկ ճշմարիտը ասել նրան չէ թոյլատրում սինօզի ամենագօրեղ կազմը: Եկեղեցին լռում էր և մինչև օրս էլ լռում է: Այդ պատճառով՝ ընականաբար, ես կըխօսեմ միայն այն մասին, թէ ինչպէս կարող է նայել ուղղափառ եկեղեցին մահուան պատժի վրայ: Կարճ կըխօսեմ.

1)• Եկեղեցու վարդապետութեան համաձայն կեանքը Աստուծոյ պարգևն է, այդ պատճառով, բացի Աստուծուն, ոչ ոք չի կարող, իրաւունք չունի այն մարդուց խլելու:

2)• Փրկիչը աշխարհ եկաւ ոչ թէ արդարներին լիւրկելու, այլ մեղաւորներին ապաշխարութեան կանչելու համար. ապաշխարելու խօսքով նա դառնում էր ամենքին, նոյն իսկ ամենածանր յանցաւորներին, համայնքի մէջ ամենից արհամարհուածներին—անառակներին և մաքաւորներին: Եկեղեցին չի էլ ճանաչում այն ատիժանի մեղաւորութիւն մարդու մէջ, երբ նա անընդունակ դառնար ապաշխարելու. միայն դէն է ապաշխարելու անընդունակ:

Ուրեմն մահուան պատիժը ենթադրում է մարդու մէջ